

կամաց-կամաց այդ գիւղակին սահմանները աւելի ներս, դէպի հայերուն հողերը: 1890ին հողային հարցը գրականութիւն մը արժեկը չափ մելան է սպառած առաջնորդաւորներու, պատրիարքարանի կողմէ կառավարութեան մօտ կատարուած դիմումներով: Արդիւնքը այն եղաւ, որ 1900ին թուրքերը սպառնացին հին գեղերը ոչնչացնել, եթէ երբեք այդ գլուխ ցաւցնող դիմումները վերջ մը չգտնէին, միւս կողմէն՝ քաջալեր կեցան գաղթականներուն: Ու ստեղծուած էր սա տեսակ կացութիւն.՝ գրեթէ ամէն շաբթու կը պատահէին սա դրուագները, առտու կանուխ իր արտը հերկելու իջնող հողագործը կը դառնար ետ, տուն, առանց եզի, արօրի, գլուխն ու ձեռքը թաշկինակով մը փաթթուած, գտնելով իր պապենական արտը վարուած թուրքի մը կողմէ: Շարժուն ինչքերու վրայ կողոպուտ ու աւար ըմբռնելի են այդ կողմերուն: Բայց դիւրին չէ հաշտուիլ օր ցերեկով, աշխարհ մը աչքերու առջեւ, արտի մը, տունի մը գողցունելուն ու, բռնապետութեան ահին իսկ գնով, լքել հողը, ուր սանկ քիչէն քիչ երեսուն տարի մատներդ խաղցեր են կանանչով ու ոսկիով, ինկեր է քրտինքդ, նետեր ես յոյս ու երազ, մա՛նաւանդ դրեր ես քու զաւկըներուդ, օճախիդ ապահովութեան մուրհակը, քեզ մարդոց երեսին փոշա մը չընող ամէնէն անսուտ վկայութիւնը, քու սրտիդ խորհուրդը: Տեսարանը թատերական է, որքան եղերական: Խօսք, ընդդիմութեան փորձ: Արդարութեան զգացումներու կոչ: Միւսլիմանը ծանր գլուխ ու սակաւախօս, այդ առտու ծանրականջ ալ կ'ըլլար: Ու ահա դաշտին պահապանները, ալպանացի, հայ գիւղին դրամովը վարձուած: Կը բուսնէին, առանց ձայնի կը զարնէին գլխուդ մաուզէրին բունովը, կը գրաւէին եզներդ, որոնք օտար հողի մէջ (ո՛վ հեգնութիւնը աշխարհի օրէնքներուն) բռնուած կ'ըլլային եւ, հետեւաբար, ենթակայ տուգանքի: Քանի՜-քանի՜ անպատիժ մահեր վարժեցուցեր էին գիւղացին ձայնը կուլ տալու ու կարճ կապելու ալպանացի պահապանին հետ, որ իրիկուան կու գար գիւղ, կը յանձնէր օտար հողի վրայ